Այս հրաման եհաս յԵրուսաղէմ զկնի ճանապարհորդելոյ Գրիգորի Պատրիարքի 'ի Բիւզանդիոն , և միաբանք խորհէին առաքել զայլ կարեւոր դրամս · այլ մնացին առնուլ լուր ինչ բարի ։ Սակայն հակառակ խորհրդոցն եհաս գիր 'ի Յովհաննու Պատրիարքէ , յորում Թախանձէր քահանայիւք եւ ժողովրդովք զԳրիգոր Պատրիարք փութալ գալ հասանիլ 'ի Կոստանդինուպօլիս , զի կարի տաղտկացեալ էին յերեսաց խնդրոյն Յունաց · եկ ասէին՝ կաց ընդդէմ ախոյեանի քում , զի քեզ հաւատացաւ տունդ այդ ։

Եւ Գրիգոր Պատրիարք յօժարութեամբ յանձն առ կատարել զխնդիր նոցա , եւ յերկրորդ աւուր մեծի Պասեքին ընթերցաւ զգիրս յեկեղեցւոջ Ս · Յակոբայ 'ի լուր ուխտաւորաց և միաբանաց , եւ որոշեաց զարս գլխաւորս յեկեղեցականաց , և կարգեաց զնոսա Տեղապահ , Փոխանորդ , Գանձապետ և Թարգման , և յանձն արար զկառավարութիւն Աթոռոյն 'ի խնամս նոցա , արթուն կալ եւ ծառայել հաւատարմութեամբ և խոհեմութեամբ · և պատրաստեալ զամենայն ինչ , էջ 'ի Յոպպէ ընդ ուխտաւորս տարւոյն (1736 , 'ի 6 Մայիսի) ։

ԳԼՈՒԽ Զ ·

Ուղեւորութիւն Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպօլիս ։ Կարեւոր դէպք որք պատահեցան անդ ։ Պայմանագիր Յունաց ։ Բնագիր Գաղղիարէն Նամակի Կարտինալի Ֆլօրիայ ։ Վէճ Լատինաց ։ Դարձ Գրիգորի 'ի Կոստանդինուպօլսէ յԵրուսաղէմ ։

ԳՐԻԳՈՐ Պատրիարք հասեալ 'ի Նաւահանգիստն Յոպպէի , դադարեաց անդ զաւուրս ինչ · ապա եմուտ 'ի Նաւ ընդ ուխտաւորս (Մայիս 15), եւ պատահեալ յաջողակ հողմոյ հասին 'ի Կիպրոս · փութաց ընծայիւք Ակնցի Մարտիրոս վարդապետ 'ի նաւն , և յարդանօք մեծարեաց ըզՀայրապետն ։ Եւ մեկնեալ անտի և ծանրանաւեալ հազիւ